

ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿ

Դիմումները ընդունվում են միայն Աշնան և Գարնան կիսամյակների համար

Ընդարձակ Ջնարավորությունների Ծրագիր և Ծառայություններ-ը (EOP&S) կազմակերպում է օժանդակող ծառայություններ ոչ-ավանդական ուսանողների համար: Այն տրամադրում է ուսանողներին դեպի մասնագիտական նպատակադրում եւ խթանում է ուսանողի ինքնավստահության բարձրացմանը: Լոս Անջելեսի Զաղաքային Զուլեջի EOP&S ծրագիրը, որպես նահանգի կողմից ֆինանսավորված ծրագիր, իր տեսակի մեջ ամենամեծն է Կալիֆորնիայում:

Ծրագրի Անդամության պայմաններն են՝

1. Դուք պետք է լինեք լիաժամ ուսանող (12 դասաժամ կամ ավել):
Եթե Դուք Հաշմանդամ Ուսանողների Ծրագրի եւ Ծառայությունների (DSP&S) անդամ եք, ապա պետք է ունենաք 6 կամ ավելի դասաժամ: Ձեր դասաժամերի արձանագրման թերթիկը պետք է կնիքով հաստատված լինի DSP&S ծրագրի կողմից:
2. Պետք է լինեք Կալիֆորնիա նահանգի բնակիչ:
3. Չեք կարող ունենալ որեւէ քուլեջի կամ համալսարանի դիպլոմի համար անհրաժեշտ 69 ամբողջացրած դասաժամ:
Չպետք է ունենաք հաստատված Associates of Arts/Science degree կամ բարձրագույն դիպլոմ:
4. Պետք է ունենաք նահանգային կոմիտեի կազմի կողմից հաստատված Ա կամ Բ տեսակի fee waiver (առարկաների ծրագրի արձանագրության իրավունք) ընթացից ուսումնական կիսամյակում:
5. Պետք է ունենաք կրթական սահմանափակ հնարավորություններ ունեցող ուսանողի կարգավիճակ, համապատասխան նահանգային կանոնադրության:

Ծրագրի Ծառայություններն են՝

1. Կրթական և անձնական խորհրդատվություն
2. Գրքերի օգնություն
*Նոր ուսանողների համար գրքերի օգնության շնորհումը ապահովված չէ ընթացիկ կիսամյակում:
Նոր ուսանողները կապահովվեն հաջորդ կիսամյակի գրքերի օգնությամբ, եթե բավարարեն ծրագրի պայմաններին:*
3. Առարկաների առաջնահերթ արձանագրություն:
4. Առարկաների լրացուցիչ պարապմունք:
5. Կրթաթոշակների, ուսման եւ աշխատանքային պատմություն կազմելու (Resume), ուսման եւ կարելու նյութի գրառման հմտության, կրթական workshop-ների եւ դեպի այլ ուսումնական բնագավառներ ուղեւորությունների կազմակերպման օգնություն:
6. Օգնություն այլ ուսումնական հաստատություններ տեղափոխվելու, հնչյալես նաեւ Կալիֆորնիայի եւ Կալիֆորնիայի նահանգային Համալսարաններ տեղափոխվելու դիմումների վճարի շահում:
7. Գիտական հաշվիչ մեքենաների (calculator) փոխառության ծրագիր (loan):

L.A. City College

— Կանոնների բացատրությունը տես հաջորդ էջում —

Extended Opportunity Program and Services

Մուտքի կանոնները՝

1. Ներկայացրեք Ձեր Առարկաների արձանագրության թերթիկը (Registration Receipt)՝ իսկականը (պատճեն չի ընդունվում), որը ցույց կտա 12 կամ ավելի դասաժամի արձանագրություն (DSP&S ծրագրի ուսանողների համար 6 կամ ավելի): Լրացրեք EOP&S-ի անդամության դիմումը:

Գործընթացը հեշտացնելու և արագացնելու նպատակով խնդում ենք ձեր հետ բերել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) Մաթեմատիկայի և անգլերեն լեզվի գիտելիքների մակարդակը պարզող քննության պատասխանը:
- բ) Ձեր հաճախած այլ քոլեջների կամ համալսարանների նախկին գնահատականների իսկական օրինակը կամ պատճեն:

2. Սովորաբար դիմումի ստուգումը տեւում է 48 ժամ (2 օր): Համեմայնդեպս, կիսամյակի սկզբին, երբ մենք չափազանց զբաղված ենք, այն կարող է տեւել մինչև 3 օր:
3. Վերը նշված ժամկետից հետո, վերադարձեք մեր գրասենյակը՝ պարզելու ձեր համապատասխանությունը ծրագրի պայմաններին:
4. Եթե ձեր տվյալները համապատասխանեն ծրագրի պայմաններին, պետք է հաճախեք ծրագրի ծանոթության դասընթացին (EOP&S ORIENTATION):
(1.5 ժամանոց ծանոթացման դասընթացը պատրաստված է ծրագրի ծառայությունները բացատրելու և երկկողմանի պարտականությունների պայմանագիրը ուսումնասիրելու և ստորագրելու համար):

Ծանոթության դասընթացին մասնակցելը ՊԱՐՏԱԴԻՐ Է ծրագրի մեջ ընդգրկվելու համար:

Ծրագրի վայրը՝

Ընդարձակ Հնարավորությունների Ծրագիր և Ծառայությունները (EOP&S) գտնվում է Քլաուսեն շենքի (Clausen Hall 111B-ի) համար 111F գրասենյակում.

EXTENDED OPPORTUNITY PROGRAM and SERVICES

Los Angeles City College • 855 N. Vermont Ave, Clausen Hall 111B • Los Angeles, Ca 90029

(323) 953-4000 Ext. 2300 • Fax (323) 953-4013

